ՊԱՐՏՎԻՐ ՃԱԿԱՏԱՄԱՐՏՈՒՄ, ԲԱՅՑ ՀԱՂԹԻՐ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ ԵՐԿԱՐԱԺԱՄԿԵՏ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

(Ռազմավարություն տասներկուերորդ)

Ձեզ շրջապատողներից շատերը իշխանության ձգտող ստրատեգներ են և յուրաքանչյուրը լոբբինգի է դիմում սեփական շահերի համար: Ընդ որում՝ հաճախ ձեր հաշվին: Ամենօրյա մարտերը, որոնք դուք պետք է վարեք նրանց դեմ, ստիպում են ձեզ անտեսել այն միակ բանը, որը միայն կարևորն է՝ վերջնական հաղթանակ, նպատակի ձեռքբերում, ամուր ուժ:

Երկարաժամկետ ռազմավարությունը արդյունքները հաշվարկելու և մի քանի քայլ առաջ տեսնելու արվեստն է: Դրա համար անհրաժեշտ է կենտրոնանալ հիմնական նպատակի վրա և կազմել դրան հասնելու պլան: Դուք պետք է սովորեք կանխատեսել տարբեր հնարավոր տարբերակները և ձեր քայլերի երկարաժամկետ հետևանքները: Դուք ազատություն չեք տալիս զգացմունքներին, չեք կոտրվում, ձեզ պահում եք ձեր ձեռքերում, և ձեր գործողությունները դառնում են ավելի նուրբ, մտածված և արդյունավետ: Թող մյուսները, մարտի շրջապտույտի մեջ ներքաշված, ուրախանան իրենց փոքրիկ հաղթանակներով: Երկարաժամկետ ռազմավարությունը ձեզ վերջնական արդյունք կբերի: Դուք վերջում կծիծաղեք:

ՄԵԾ ԱՐՇԱՎ

Ալեքսանդրը (մ.թ.ա. 356-323) մեծացել էր մակեդոնական արքունիքում, և այստեղ նա համարվում էր բավականին տարօրինակ երիտասարդ: Նա պաշտում էր սովորական տղայական զվարճանքները՝ որսորդություն, ձիեր, պատերազմ: Բազմաթիվ մարտերում նա կռվել էր իր հոր՝ Փիլիպոս II Մակեդոնացու կողքին և մեկ անգամ չէ, որ ապացուցել էր իր քաջությունն ու փառահեղությունը: Բայց երիտասարդը հետաքրքրված էր նաև փիլիսոփայությամբ և գրականությամբ: Նրա ուսուցիչը մեծն մտածող Արիստոտելն էր, որի ազդեցությամբ Ալեքսանդրը սիրահարվեց քաղաքականության և գիտության մասին խոսակցություններին և սովորեց անխոով նայել աշխարհին: Մայրը՝ Օլմպիադան, միստիցիզմով հակված կին էր և նույնպես ազդում էր Ալեքսանդրի վրա ամեն ինչում փնտրելով նշաններ և նախանշաններ: Մայրը անսովոր տեսիլքներ ուներ Ալեքսանդրի ծննդյան հետ առնչված և նշում էր, որ նա կկառավարելու է աշխարհն ու այդ մասին պատմում էր իր որդուն՝ ոգեշնչելով նրան Աքիլեսի՝ իր ընտանիքի լեգենդար նախնիների պատմություններով: Ալեքսանդրը կուռք էր համարում իր մորը (նա չէր սիրում հորը) և լիովին լուրջ էր վերաբերվում նրա մարգարեություններին: Վաղ տարիքից նա իրեն այնպիսի արժանապատվությամբ էր պահում, կարծես իսկապես ավելին լիներ, քան պարզապես թագավորի որդի:

Ալեքսանդրը մեծացավ որպես Փիլիպոս II-ի իրավահաջորդ, նա պետք է ժառանգեր այն թագավորությունը, որը նկատելիորեն աճել էր իր հոր օրոք: Փիլիպոսը կարողացավ զգալիորեն ուժեղացնել մակեդոնական բանակը՝ այն դարձնելով ամենաուժեղը ամբողջ Հունաստանում: Նա հաղթեց Թեբեին և Աթենքին, նա միավորեց բոլոր քաղաք-պետությունները (բացառությամբ Սպարտայի) և ստեղծեց Կորնթոսի կամ ընդհանուր հելլենական միությունը, որը և ղեկավարում էր: Նա հզոր տեր էր, ով վախ էր առաջացնում մարդկանց և թշնամիների նկատմամբ: Սակայն մ.թ.ա. 336 թվականին Փիլիպոսը մահացավ իր մերձավորի՝ Պաուսանիուս անունով արիստոկրատի ձեռքից:

Թագավորի մահվան մեջ տեսնելով այն նշանը, որ երբեմնի հզոր Մակեդոնիան ցնցվել է, Աթենքը հայտարարեց, որ դուրս է գալիս միությունից: Նրան հաջորդեցին այլ քաղաք-պետություններ: Այժմ Հյուսիսային ցեղերը սպառնում էին ներխուժմամբ: Գրեթե մեկ գիշերվա ընթացքում Փիլիպոսի կայսրությունը սկսեց քանդվել:

Երբ Ալեքսանդրը գահ բարձրացավ, նա ընդամենը քսան տարեկան էր, և շատերը կարծում էին, որ նա պատրաստ չէ այդ դերին: Մակեդոնացի ռազմական ղեկավարներն ու քաղաքական առաջնորդները ստիպված էին երիտասարդ թագավորին վերցնել իրենց թևի տակ: Նրանք խորհուրդ տվեցին նրան չշտապել, նախ ամրապնդել իր դիրքը բանակում և երկրում, իսկ հետո աստիճանաբար վերակենդանացնել միությունը՝ գործելով հարկադրանքով, ուժով և խորամանկությամբ: Հենց այդպես էլ կվարվեր ինքը՝ Փիլիպոսը: Ալեքսանդրը, սակայն, չլսեց խրատներն ու խորհուրդները: Նա այլ ծրագիր ուներ, համենայն դեպս ամեն ինչ հենց դրա մասին էր վկայում: Թույլ չտալով իր թշնամիներին, ինչպես Մակեդոնիայում, այնպես էլ նրա սահմաններից դուրս, հավաքվել և կողմնորոշվել, նա զորքեր ուղարկեց դեպի հարավ և, կատարելով մի շարք արագ մանևրներ, կրկին գրավեց Թեբեան: Ալեքսանդրի հաջորդ քայլը աթենացիների դեմ արշավն էր, ովքեր, վախենալով ծանր պատժից, նախապես կանխելով հարձակումը, ողորմություն աղերսեցին՝ հայտնելով միությանը կրկին միանալու որոշման մասին: Ալեքսանդրը ողորմորեն կատարեց նրանց խնդրանքը:

Էքսցենտրիկ երիտասարդ կառավարիչը վճռական և անկանխատեսելի էր: Նա հարձակվեց, երբ ոչ ոք չէր սպասում, բայց միևնույն ժամանակ անսպասելի ողորմա-

ծություն ցուցաբերեց աթենացիների նկատմամբ: Նրա մտադրությունները դժվար էր հասկանալ, սակայն իշխանության գալով առաջին իսկ գործողությունները շատերին դարձրեցին նրա ջերմեռանդ հետևորդները: Ալեքսանդրի հաջորդ քայլն ավելի տարօրինակ և սադրիչ էր: Իր հաջողությունը ամրապնդելու և դեռևս անկայուն Միությունը ամրապնդելու փոխարեն, նա առաջարկեց հարձակվել Պարսկական կայսրության՝ Հունաստանի գլխավոր թշնամու վրա: Նկարագրված իրադարձություններից մոտ հարյուր հիսուն տարի առաջ պարսիկները փորձել էին նվաճել Հունաստանը: Նրանք գրեթե հաջողության էին հասել, և այդ ժամանակվանից ի վեր նրանք երազում էին կրկին փորձել և այս անգամ հաջողության հասնել: Պարսկական մշտական սպառնալիքը լարվածության մեջ էր պահում հույներին, իսկ հզոր պարսկական նավատորմը խոչընդոտում էր նրանց ծովային առևտրի զարգացմանը:

Մ.թ.ա. 334 թվականին Ալեքսանդրը 35,000 հույներից բաղկացած համակցված բանակը գլխավորեց Դարդանելի նեղուցով դեպի Փոքր Ասիա՝ Պարսկական կայսրության արևմտյան մաս:

Թշնամիների հետ առաջին բախման ժամանակ՝ Գրանիկոսի ճակատամարտում, հույները գլխովին ջախջախեցին պարսիկներին: Ալեքսանդրի զորավարներն ակամայից հիանում էին նրա վճռականությամբ: Թվում էր, թե նա կասկած չուներ, որ Պարսկաստանը կնվաճվի իր կողմից, և մոր մարգարեությունը կկատարվի մոտ ապագայում: Նա հաջողության հասավ արագ գործողությունների և նախաձեռնությունը խլելու ունակության շնորհիվ: Այժմ և զինվորները, և հրամանատարները սպասում էին, որ նա հրամայի շարժվել ուղիղ դեպի արևելք, Պարսկաստանի խորքը, որպեսզի ավարտի թշնամու վերջնական ջախջախումը, որի բանակը կարծես վերջին շնչի վրա էր:

Եվ կրկին Ալեքսանդրը խաբեց համընդհանուր սպասումները՝ հանկարծ որոշում կայացնելով անել մի բան, որը նախկինում երբեք չէր արել՝ սպասել: Այդ քայլը նրանից ավելի վաղ էին սպասում, երբ նա նոր էր եկել իշխանության, և դա կհամարեին խելամիտ, բայց հիմա, ստեղծված իրավիճակում, նա կարծես պարսիկներին տալիս էր այն, ինչ նրանց ամենից շատն էր պետք՝ ժամանակը: Եվ այնուամենայնիվ, Ալեքսանդրը բանակը տարավ ոչ թե արևելք, այլ Հարավ՝ Փոքր Ասիայի ծովափ՝ ճանապարհին գրավելով բնակավայրերը, կամ, ավելի ճիշտ, ազատելով դրանք պարսիկների տիրապետությունից: Հանկարծ նա շրջվեց դեպի արևելք, իսկ հետո, կտրուկ զիգզագ կատարելով, նորից հարավ, Փյունիկիայի միջով դեպի Եգիպտոս, հեշտությամբ ջախջախելով այնտեղի պարսիկների թույլ ամրացված կայազորը: Եգիպտացիները պարսիկներին ատում էին և ողջունում էին Ալեքսանդրին որպես ազատարարի: Այժմ նա կարող էր ապավինել Եգիպտոսի հարուստ սննդի պաշարներին՝ իր բանակը կերակրելու համար, ինչը թույլ կտար Հունաստանի տնտեսությունը կայուն վիճակում պահել, մինչդեռ պատերազմը կկործաներ Պարսկաստանը և կսպառեր նրա ռեսուրսները:

Այժմ, երբ հույները տնից հեռու էին, պարսկական ռազմական նավատորմը լուրջ վտանգ էր ներկայացնում: Այն կարող էր դեսանտ իջեցնել Միջերկրական ծովի գրեթե ցանկացած կետում, որպեսզի ցանկացած պահին հարված հասցնեին հույներին թևերից կամ թիկունքից: Նախքան արշավ սկսելը, շատերը պարսիկներին ծովում հաղթելու համար, Ալեքսանդրին համոզում էին սկզբում ուժեղացնել հունական նավատորմը, կառուցել նոր նավեր: Ալեքսանդրը անտեսեց այս խորհուրդները: Փոխարենը, անցնելով փոքր Ասիայով և Այնուհետև Փյունիկիայի ափի երկայնքով, նա պարզապես գրավեց և արգելափակեց պարսկական հիմնական նավահանգիստները՝ դրանով իսկ նրանց նավատորմը դարձնելով բոլորովին անօգուտ: Այս փոքրիկ հաղթանակները նպատակ ունեին հասնել ավելի մեծ ռազմավարական նպատակի: Բայց նրանք բոլորը քիչ նշանակություն

կունենային, եթե հույները չկարողանային վճռական ճակատամարտում հաղթել պարսիկներին: Եվ Ալեքսանդրը, կարծես, ամեն ինչ անում էր իր ուժերի սահմաններում՝ իր հաղթանակն ավելի դժվարացնելու համար:

Պարսից Դարեհ արքան իր զորքերը հավաքեց Տիգրիս գետի արևելքում: Նա իր տրամադրության տակ ուներ անթիվ ուժեր և ճակատամարտի վայրի ընտրությունն իրենն էր: Նա հանգիստ սպասում էր, որ Ալեքսանդրը անցնի գետը: Արդյո՞ք Ալեքսանդրը կորցրել էր կռվելու ցանկությունը: Հնարավո՞ր է պարսկական և եգիպտական մշակույթը նրան մեղմացրել էին: Անշուշտ, թվում էր, թե դա այդպես է: Նա սկսել էր պարսկական հագուստ հագնել և ընդունել որոշ պարսկական սովորույթներ: Ասում էին նույնիսկ, որ նա հարգանքի տուրք էր մատուցում պարսկական աստվածություններին:

Երբ պարսկական բանակը նահանջեց Տիգրիսից արևելք, կայսրության մեծ տարածքները հայտնվեցին հունական վերահսկողության տակ: Ալեքսանդրն այժմ իր ժամանակի մեծ մասը նվիրում էր ոչ թե ռազմական մարզումներին, այլ քաղաքականությանը՝ փորձելով հասկանալ, թե ինչպես լավագույնս կառավարել այդ տարածաշրջանները: Նա գրավյալ տարածքներում որոշեց վերակառուցել պարսկական համակարգը պահպանելով նույն տիտղոսները կառավարական պաշտոնների համար և հավաքելով նույն տուրքը, ինչ Դարեհը: Նա փոխեց միայն ամենադաժան և ամենաանպարկեշտ պարսկական օրենքները: Նրա առատաձեռնության և մեծահոգության մասին լուրը արագ տարածվեց նրա նոր տիրույթներում: Բնակավայր առ բնակավայր առանց պայքարի հանձնվում էին հույներին՝ համարելով օրհնություն Ալեքսանդրի աճող կայսրության մաս կազմելը, որը չափերով գերազանցում էր և՛ Հունաստանին, և՛ Պարսկաստանին:

Նվաճողը հանդես եկավ որպես միավորող գործոն, բարի, հոգատար Աստված: Վերջապես, մ.թ. ա. 331 թվականին Ալեքսանդրը դուրս եկավ Գավգամելայում պարսկական հիմնական բանակի դեմ: Նրա ռազմական ղեկավարներից քչերն էին գիտակցում, որ կորցնելով իրենց նավատորմը օգտագործելու հնարավորությունը, կորցնելով հարուստ հողերը Եգիպտոսում և կորցնելով հպատակների աջակցությունը, Պարսկական կայսրությունը, ըստ էության, արդեն ջախջախված էր:

Ալեքսանդրի հաղթանակը Գավգամելայում պարզապես հաստատեց այն, ինչ նա արդեն ձեռք էր բերել ճակատամարտից մի քանի ամիս առաջ: Այժմ նա դարձավ ժամանակի հզոր Պարսկական կայսրության միանձնյա կառավարիչը: Կատարելով մոր մարգարեությունը՝ Ալեքսանդր Մակեդոնացին դարձավ այդ ժամանակ հույներին հայտնի գրեթե ամբողջ աշխարհի տիրակալը:

Մեկնաբանում

Ալեքսանդր Մակեդոնացու զորաշարժը սարսափեցնում էին նրա ենթականերին: Թվում էր, թե դրանց մեջ ոչ մի տրամաբանություն, հետևողականություն չկա: Միայն ավելի ուշ հույները կարողացան հասկանալ այն ամենը, ինչ տեղի ունեցավ և գնահատել նրա գործերի մեծությունը: Նրանք չկարողացան հասկանալ նրան, քանի որ Ալեքսանդրը ստեղծեց մտածողության և գործելու բոլորովին նոր ձև իր աշխարհի համար՝ մեծ ռազմավարության արվեստը: Այս արվեստը պահանջում է, որ դուք կարողանաք տեսնել հեռանկարը, հաշվարկել իրադարձությունների ընթացքը ներկա պահից, հաջորդական մարտերից, իրավիճակներից և անհանգստություններից այն կողմ: Փոխարենը, դուք կենտրոնանում եք այն բանի վրա, ինչին ցանկանում եք ի վերջո հասնել: Չենթարկվելով յուրաքանչյուր իրադարձությանը արձագանքելու գայթակղությանը՝ դուք համապատասխանեցնում եք յուրաքանչյուր գործողություն և արարք ձեր վերջնական նպատակներին:

Դուք մտածում եք ոչ թե եզակի մարտերի և ճակատմարտերի, այլ ամբողջ արշավի մասին որպես ամբողջություն։

Մտովի հետևեք Ալեքսանդրի գործողությունների տարօրինակ ամպլիտուդին և կտեսնեք, թե որքան տրամաբանական և հետևողական են դրանք։ Թեբեի, այնուհետև Պարսկաստանի դեմ արագ գործողությունները անհրաժեշտ հոգեբանական ազդեցություն ունեցան նրա բանակի զինվորների և նրանց վրա, ովքեր կասկածում էին նրան։ Ոչինչ չի կարող ավելի արագ հանգստացնել և ուժեղացնել բանակը, քան ռազմական գործողությունները։

Ալեքսանդրի արշավը ատելի պարսիկների դեմ պարզվեց, որ փայլուն միջոց է, որը թույլ է տալիս միավորել հույներին։ Այնուամենայնիվ, երբ նրանք արդեն Պարսկաստանում էին, չպետք է նույնքան արագ գործեին։ Ալեքսանդրը հասկանում էր, որ այսպիսի մարտավարությունը սխալ կլիներ։ Եթե նա առաջ շարժվեր դեպի երկրի խորքը, ստիպված կլիներ միանգամից կառավարել շատ մեծ տարածքներ։ Դա անխուսափելիորեն կհանգեցներ նյութական ռեսուրսների արագ սպառմանը, իսկ իշխանության վակուումի առկայության դեպքում թշնամիները, անկասկած, կփորձեին ինտրիգներ կառուցել նրա դեմ և ձողեր մտցնել անիվների արանքը։ Նման իրավիճակում ավելի լավ է հանգիստ շարժվել՝ սկզբում կառուցելով եղածը, նվաճելով սրտերը և գրավելով մտքերը։

Նավատորմի կառուցման համար գումար ծախսելու փոխարեն ավելի լավ էր պարզապես պարսիկներին զրկել իրենց նավերն օգտագործելու հնարավորությունից։ Երկարատև ռազմարշավը ֆինանսավորելու համար, որը կարող է երկարաժամկետ հաջողություն բերել, նա նախ գրավեց Եգիպտոսի բերրի հողերը։

Ալեքսանդրի գործողություններից ոչ մեկը պատահական չէր։ Նրանք, ովքեր նակատեցին, թե ինչպես են Մակեդոնացու ծրագրերը պտուղ տալիս, նույնիսկ այնպիսի ձևերով, որոնք իրենք չէին կարող կանխատեսել կամ կանխագուշակել, հավատում էին, որ ականատես են մարմնավորված իսկական Աստծո, և իրոք, Ալեքսանդրի իշխանությունը իրադարձությունների նկատմամբ, դրանք կանխատեսելու նրա ունակությունը շատ ավելի վաղ, քան դրանց տեղի ունենալը, թվում էր աստվածային։

Կյանքում մեծ ստրատեգ դառնալու համար հարկավոր է հետևել Ալեքսանդրին։ Վերծանեք այս անհատական ռեբուսը՝ որոշելով, թե ինչին եք վիճակված հասնել, և որ ուղղությամբ են ձեզ դրդում զարգացնել ձեր ունակություններն ու տաղանդները։ Եթե ձեր կյանքում ինչ-որ բան սխալ է տեղի ունեցել, ապա պետք է ինքներդ ձեզ հարցնեք։ Պատկերացրեք ինքներդ ձեզ հստակ և մանրամասն՝ փայլուն կերպով կատարելով ձեր նպատակը։ Ինչպես խորհուրդ էր տալիս Արիստոտելը, աշխատեք կառավարել ձեր հույզերը և զարգացրեք ձեր գործողությունների հետևանքները հաշվի առնելու ունակությունը. «Այս գործողությունը թույլ կտա ինձ առաջ շարժվել դեպի իմ նպատակը, մինչդեռ այն ոչ մի լավ բանի չի հանգեցնի»։ Նման չափանիշներով առաջնորդվելով՝ դուք կկարողանաք առաջ շարժվել՝ առանց շեղվելու ձեր ընտրած ուղուց։

Անտեսեք ավանդական իմաստությունը, այն ավանդական իմաստությունը, որը թելադրում է, թե ինչն է տեղին և ինչը՝ ոչ։ Այս ամենը կարող է իմաստալից լինել ոմանց համար, բայց բացարձակապես ոչ մի կապ չունենա ձեր սեփական նպատակների կամ ճակատագրի հետ։ Ձեզ անհրաժեշտ է համբերություն՝ ձեր բազմակողմանի ծրագրերը քննարկելու համար՝ արշավանք վարելու, այլ ոչ թե ճակատամարտից ճակատամարտ շարժվելու։ Ձեր ուղին կարող է գալարուն լինել, ձեր գործողությունները՝ անհասկանալի ուրիշների համար, բայց սա լավագույնն է։ Որքան քիչ են նրանք հասկանում ձեզ, այնքան ավելի հեշտ է խճճել, մանիպուլյացիայի ենթարկել և գայթակղել։ Այս ուղուն հետևելով՝ դուք կհասնեք Օլիմպիական աստվածների հանգստությանը։ Ապագան կանխատեսելու

ունակությունը ձեզ կառանձնացնի մյուս մահկանացուներից, անկախ նրանից՝ նրանք դատարկ երազողներ են, ովքեր անկարող են գործել, թե՞ գործնականներ, ում բախտաբաժինը միայն մանրուքներ են:

ՏՈՏԱԼ ՊԱՏԵՐԱԶՄ

1967 թվականին Վիետնամում կռվող ամերիկյան զինվորականները, կարծես, վերջապես մոտ էին հաջողությանը: Սկսվեց մի շարք գործողություններ՝ Վիետկոնգի՝ Հյուսիսային Վիետնամի ռազմական խմբավորման դեմ, որը ներթափանցել էր Հարավային Վիետնամ և վերահսկողություն էր հաստատել գյուղական տարածքների մեծ մասի նկատմամբ: Այս պարտիզաններին գտնելը չափազանց դժվար էր, սակայն այդ տարի ամերիկացիները կարողացան զգալի կորուստներ պատճառել Վիետկոնգին այն քիչ մարտերում, որոնցում նրանք կարողացան մասնակցել: Հարավային Վիետնամի նոր ամերիկամետ կառավարությունը համեմատաբար կայուն էր, ինչը հույս էր ներշնչում, որ բնակչությունը կվստահի նրանց: Երկրի հյուսիսում զանգվածային ռմբակոծությունների արդյունքում հաջողվեց ոչնչացնել վիետնամական օդանավակայանները և լուրջ վնաս հասցնել նրանց ռազմաօդային ուժերին: Ճիշտ է, այդ ժամանակ Միացյալ Նահանգներում զանգվածային հակապատերազմական ցույցերի ալիք բարձրացավ, բայց հասարակական կարծիքի հարցումները ցույց տվեցին, որ ամերիկացիների մեծամասնությունը, այնուամենայնիվ, աջակցում էին պատերազմին և հավատում էին արագ հաղթանակին, քանզի Վիետկոնգը և Հյուսիսային Վիետնամի բանակը ցույց էին տվել իրենց անգործունակությունը ամերիկյան տեխնոլոգիաների և զենքի դեմ: Ռազմավարությունն այն էր, որ փորձեին նրանց ներքաշել լուրջ բախման մեջ: Այս ճակատամարտը կարող էր շրջել պատերազմի ընթացքը և որոշել դրա արդյունքը:

1967-ի վերջին հետախուզությանը հաջողվեց պարզել, որ վիետնամցիները պատրաստվում են ընկնել կարգված ուժերի մեջ: Նրանց հրամանատարը՝ գեներալ Վո Նգուեն Դյապը, ծրագրում էր լուրջ հարձակողական գործողություն Կխեշանիում ԱՄՆ ծովային հետևակի բազայի դեմ: Ըստ ամենայնի, նա մտադիր էր կրկնել իր ամենամեծ նվաճումը՝ 1954 թվականին Դիենբիենֆուի ճակատամարտում տարած հաղթանակը, երբ նրան հաջողվեց ջախջախել ֆրանսիական բանակը և հասնել Վիետնամից ֆրանսիական զորքերի դուրսբերմանը:

Կխեշանը կարևոր ռազմավարական կետ էր, որը գտնվում էր Հյուսիսային և Հարավային Վիետնամները բաժանող ապառազմականացված գոտուց ընդամենը տասնչորս մղոն հեռավորության վրա: Լաոսի սահմանը ձգվում էր բազայից մոտ վեց մղոն հեռավորության վրա՝ հենց այնտեղ, որտեղ հատվում էր հայտնի Հո Շի Մինի արահետը՝ հարավում կռվող Վիետկոնգի մատակարարման ուղին: ԱՄՆ բանակի գլխավոր հրամանատար գեներալ Ուիլյամ Ուեստմորլենդը Կխեշանն օգտագործում էր հյուսիսից և արևմուտքից հակառակորդի գործունեությունը դիտարկելու համար: Դիենբիենֆուն ժամանակին նմանատիպ դեր էր խաղացել ֆրանսիացիների համար, և Դիապը կարողացել էր կտրել այն և ոչնչացնել: Ուեստմորլենդը վստահ էր, որ թույլ չի տա, որ նման բան կրկին պատահի:

1968 թվականի առաջին շաբաթներին Վիետնամը ուշադրության կենտրոնում էր: Ամերիկյան լրատվամիջոցները և Սպիտակ տունը վստահորեն հայտարարում էին, որ վճռական ճակատամարտը անխուսափելի է, որն էլ կփոխի պատերազմի ընթացքը: Վերջապես, 1968 թվականի հունվարի 21-ին, Հյուսիսային Վիետնամի բանակը սկսեց հարձակումը: Երբ երկու կողմերի դիրքերը որոշվեցին, իրավիճակը փակուղային դարձավ:

Զինված բախման սկսվելուց անմիջապես հետո սկսվեց Վիետնամական Տետ տոնը՝ Նոր տարին ըստ լուսնային օրացույցի: Այն, ինչպես ցանկացած Նոր տարի, սովորաբար նշվում է աղմկոտ և ուրախ: Պատերազմի ժամանակ նման դեպքերում ընդունված է բանակցել զինադադարի շուրջ: Այդ տարին բացառություն չէր, քանի որ Վիետկոնգը և Հյուսիսային Վիետնամի բանակը ցույց էին տվել իրենց անկարողությունը ամերիկյան տեխնոլոգիաների և զենքի առջև, ռազմավարությունն այն էր, որ փորձեին նրանց ներքաշել լուրջ բախման մեջ: Այս ճակատամարտը կարող էր շրջել պատերազմի ընթացքը և որոշել դրա արդյունքը:

Սակայն հունվարի 31-ի վաղ առավոտյան՝ լուսնային տարվա առաջին օրը, Հարավային Վիետնամում ամերիկյան բոլոր հետախույզներից սկսեցին զեկույցներ ստացվել, ըստ որոնց գրեթե յուրաքանչյուր նշանակալի բնակավայր՝ լիներ դա քաղաք, թե ավան, ենթարկվել էր վիետնամցիների հարձակմանը: Նույն ճակատագրին էր արժանացել նաև ամերիկյան ռազմակայանները: Սայգոնի թաղամասերը ողողված էին հակառակորդի զինվորներով, նրանցից ոմանք նույնիսկ անցնում էին ԱՄՆ դեսպանատան ցանկապատով՝ վտանգելով ներթափանցել Վիետնամում ամերիկյան ներկայության սիրտը: Ծովային հետևակայիններին հաջողվեց արյունալի պայքարում պաշտպանել դեսպանատունը: Իրադարձությունների վայրերից ռեպորտաժները սկսեցին ցուցադրվել ամերիկյան հեռուստատեսությամբ, այն էլ կրկնությամբ: Վիետնամցիները գրոհեցին նաև քաղաքային ռադիոկայանը, նախագահական պալատը և հենց Ուեստմորլենդի ռազմակայանը՝ Դա Նանգի օդային բազան: Քաղաքում ամենուր փողոցային մարտեր էին ընթանում, իսկական քաոս էր տիրում:

Սայգոնից դուրս ՝ գավառական քաղաքներում, նույնն բանն էր տիրում: Հատկապես նշանավոր էր հյուսիսվիետնամցիների կողմից Հյուեի գրավումը՝ բուդդիստների կողմից հարգված Վիետնամի հին մայրաքաղաքը: Ապստամբներին հաջողվեց գրավել գրեթե ամբողջ քաղաքը :

Մինչդեռ, Կխեշանի վրա հարձակումները շարունակվում էին: Ուեստմորլենդը դժվարանում էր որոշել, թե որն է վիետնամցիների վերջնական նպատակը: Ի՞նչ կլիներ, եթե հարավային հարձակումը ոչ այլ ինչ լիներ, քան շեղող մանևր, որը նախատեսում էր ուժերը Կխեշանից հեռացնելու համար, կամ գուցե նրանք ծրագրում էին որևէ այլ խորամանկություն: Հաջորդ շաբաթներին ամերիկացիներին հաջողվեց վերագրավել Հարավային Վիետնամի մեծ մասը, Սայգոնը, իրենց ռազմաբազաները և ամրապնդել իրենց անվտանգությունը:

Պաշարված Կխեշանի և Հյուեի դեմ պայքարն ավելի երկար տևեց, սակայն Հյուեի ամբողջ թաղամասերը հողին հավասարեցրած հրետանային և օդային ռմբակոծությունները իրենց գործը արեցին: Ապստամբները դատապարտված էին:

Վերլուծելով այս իրադարձությունները, որոնք հետագայում հայտնի դարձան որպես «Տետ» գործողություն, Ուեստմորլենդը դրանք համեմատեց Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին Արդեններում գերմանական առաջխաղացման հետ: Այդ ժամանակ գերմանացիները կարողացան անսպասելի գործողություններով ապշեցնել հակառակորդին՝ սկսելով հանկարծակի առաջխաղացում դեպի արևելյան Ֆրանսիա: Առաջին օրերին նրանք արագ և ագրեսիվ առաջխաղացում ունեցան՝ խուճապ սերմանելով, բայց երբ դաշնակիցները վերականգնվեցին անակնկալից, նրանց հաջողվեց հետ մղել գերմանական բանակը: Ի վերջո, պարզ դարձավ, որ այս առաջխաղացումը ոչ այլ ինչ էր, քան տանջալից գերմանական ռազմական մեքենայի վերջին ջղաձգումները: Ուեստմորլենդը ենթադրեց, որ նույն բանը տեղի էր ունենում նաև Վիետնամում: Երկրի հարավում գտնվող Վիետկոնգը և Կխեշանում գտնվող Հյուսիսային Վիետնամի բանակը

գտնվում էին այնպիսի ծանր վիճակում, որ նրանց օրերը, ըստ էության, հաշված էին: Իրականում, նրանց ենթակառուցվածքները չէին կարող համեմատվել ամերիկյանի հետ, և նրանց ռեսուրսները, ըստ երևույթին, սպառված էին: Նրանք երբեք չէին վերականգնվի: Վերջապես հակառակորդը բացահայտվեց և անդառնալի վնաս կրեց:

Ամերիկացիները «Տետ» օպերացիային վերաբերվեցին որպես հյուսիսայինների հաշվարկներում կոպիտ մարտավարական սխալի: Բայց հեռավոր հայրենիքից լուրերը վկայում էին այլ բան, այնտեղ գերակշռում էր այլ տեսակետ: Հեռուստատեսային սյուժեները, որոնք նվիրված էին ԱՄՆ դեսպանատան շենքի գրավմանը, Հյուեի գրոհին և ռազմաբազաների վրա հարձակումներին, շրջադարձային էին: Միլիոնավոր ամերիկացիներ մխրճված էին էկրաններին: Նախկինում, երբ վիետնամցիները ինչ-որ տեղ գործում էին ջունգլիների մացառներում, անտեսանելի, աննկատելի, նրանք, կարծես, գոյություն չունեին ամերիկյան հասարակության համար: Հիմա, առաջին անգամ, նրանք տեսնում էին, որ վիետնամցիները հայտնվեցին մեծ քաղաքներում, լցրեցին փողոցները՝ սերմանեցին ավերածություններ և խուճապ: Նրանք այնքան շատ էին: Ամերիկացիներին համոզել էին, որ պատերազմն ավարտվում է, որ հաղթանակը շատ մոտ է: Սակայն, կինոխրոնիկան հստակ ցույց էր տալիս հակառակը: Հանկարծ պատերազմի բուն նպատակը դարձավ անհասկանալի: Ինչպե՞ս էր վիետնամցիներին հաջողվել պահպանել ուժն ու կայունությունը այդքան հզոր թշնամու դեմ: Ինչպե՞ս կարող էին ամերիկացիները նույնիսկ ակնարկել մոտալուտ հաղթանակի մասին: Թվում էր, թե նրանք խրված էին ճահճի մեջ, առանց որևէ ավարտի:

Միացյալ Նահանգներում հասարակական կարծիքի հարցումները ցույց տվեցին հակապատերազմական տրամադրությունների կտրուկ աճ: Նախագահ Լինդոն Ջոնսոնի ռազմական խորհրդականները, որոնք նրան վստահեցրել էին, որ Հարավային Վիետնամը վերահսկողության տակ է, այժմ խոստովանեցին, որ այլևս այդքան էլ լավատես չեն իրավիճակի նկատմամբ: Նյու Հեմփշիրում 1968 թվականի մարտին կայացած դեմոկրատական նախնական ընտրությունները Ջոնսոնին բերեցին պարտություն՝ պարտվելով սենատոր Յուջին Մաքքարթիին, ով ակտիվորեն շահարկում էր աճող հակապատերազմական տրամադրությունները: Կարճ ժամանակ անց Ջոնսոնը հայտարարեց, որ չի առաջադրվելու նախագահի պաշտոնում և կսկսի ամերիկյան զորքերի աստիճանական դուրսբերումը Վիետնամից:

«Տետ» օպերացիան իսկական շրջադարձային պահ դարձավ Վիետնամի պատերազմի համար, սակայն այդ շրջադարձային պահը բոլորովին այն չէր, ինչը Ուեստմորլենդը և նրա շտաբը ակնկալում էին:

Մեկնաբանում

Ամերիկացի ստրատեգների համար պատերազմի արդյունքը հիմնականում որոշվում էր ռազմական հաջողություններով: Օգտագործելով ուժեղ, հիանալի սպառազինված բանակը՝ նրանք փորձեցին ոչնչացնել հնարավորինս շատ վիետնամցիների, գրավել գյուղեր՝ հավատալով, որ դա կայունություն է բերելու Հարավային Վիետնամի ամերիկամետ կառավարությանը: Եթե այդ նպատակին հասնեին, ապա Հյուսիսային Վիետնամը կհրաժարվեր հետագա պայքարից: Բայց պատերազմը ներկայացավ բոլորովին այլ լույսի ներքո: Վիետնամցիները, իրենց բնական մտածելակերպով և զգալի փորձով, հակամարտությունը շատ ավելի խորը տեսան: Նրանք հիանալի հասկանում էին, թե ինչպիսին է քաղաքական իրավիճակը երկրի հարավում, որտեղ ամերիկյան պատժիչ գործողությունները, որոնք անցկացվում էին «որոնում և ոչնչացում» նշանաբանով, Հարավային Վիետնամցի գյուղացիների մոտ բնական ատելություն առաջացրեց

ագրեսորների նկատմամբ: Հյուսիսայինները բոլոր ջանքերը գործադրեցին գյուղացիների համակրանքը շահելու և նրանց իրենց կողմը թեքելու համար՝ միլիոնավոր լուռ համակիրներ:

Կարո՞ղ էր ամերիկացիների դիրքերը հարավում կայուն համարվել, եթե նրանք չկարողանային գրավել վիետնամցի ֆերմերների սրտերն ու մտքերը: Հյուսիսվիետնամցի ռազմավարագետները լրջագույն ուսումնասիրեցին 1968 թվականին Միացյալ Նահանգներում մոտեցող նախագահական ընտրությունների քաղաքական իրավիճակ: Նրանք ծանոթացան ամերիկյան մշակույթին և հասարակությանը՝ համոզվելով, որ Վիետնամում ռազմական արշավի աջակցությունը հեռու էր միաձայն լինելուց:

Վիետնամի պատերազմը պատմության մեջ առաջին պատերազմն էր, որը ցուցադրվում էր հեռուստատեսությամբ: Զինվորականները փորձում էին դոզավորել տեղեկատվությունը, ազդել դրա վրա, բայց էկրանին ցուցադրվածը ինքնին խոսում էր: Հյուսիսվետնամցիները խորացրեցին իրենց գաղափարները, ընդլայնեցին հորիզոնները, վերլուծեցին ռազմական իրադարձությունները համաշխարհային համատեքստում, և այդ վերլուծության արդյունքում մշակեցին իրենց փայլուն ռազմավարությունը՝ «Տետ» օպերացիան: Օգտագործելով համակրող Հարավային Վիետնամի գյուղացիների բանակը՝ նրանք Նոր տարվա տոնակատարությանը նախապատրաստվելու պատրվակով պլանավորեցին (և հաջողության հասան) ամբողջ երկիրը, յուրաքանչյուր քաղաք ու յուրաքանչյուր գյուղ, ողողել իրենց մարդկանցով, մատակարարելով զենք և զինամթերք: Նպատակները, որոնց Վիետնամցի ստրատեգները նախատեսում էին հասնել, ոչ միայն ռազմական էին, այլև հեռուստատեսային: Հարձակումը Սայգոնի վրա, որը ամերիկյան հեռուստաընկերությունների մեծ մասի հենակետն էր, չափազանց դիտարժան էր: Հյուեն և Կիսեշանը նույնպես ողողված էին ամերիկացի հեռուստաընկերություններով: Հարվածների համար ընտրվել էին խորհրդանշական օբյեկտներ՝ դեսպանատներ, պալատներ, ռազմաօդային բազաներ և այլն, որոնք գրավեցին բոլորի ուշադրությունը :

Հեռուստադիտողների մոտ տպավորություն էր ստեղծվում (ուժեղ, թեև մոլորեցնող), որ վիետնամցիները ամենուր են, և որ ամերիկացիները, իրենց բոլոր ռմբակոծություններով և պատժիչ միջոցառումներով հանդերձ, բացարձակապես ոչնչի չեն հասել և ավելին անկարող են որևէ բանի հասնել ընդհանրապես: Իրականում «Տետ» օպերացիայի նպատակը ռազմական թիրախներին հարվածելը չէր, այլ ամերիկացիներին հարվածելն էր, ովքեր այդ ժամանակ գամված էին իրենց հեռուստացույցներին: Երբ ամերիկացի քաղաքացիները կորցրեցին իրենց քաղաքական գործիչների նկատմամբ հավատը, և ոչ պակաս՝ ընտրական տարում, պատերազմի ելքը որոշվեց: Հյուսիսային վիետնամցիները կարիք չունեին մարտեր հաղթելու կամ իրենց գերազանցությունը ցուցադրելու մարտադաշտում, որը երբեք էլ չունեցան, ընդհակառակը, բավական էր հարցին ավելի լայնորեն նայել՝ ոչ միայն պատերազմի, այլև քաղաքականության և մշակույթի տեսանկյունից, և նրանք հաղթեցին այս պատերազմում:

Մեզ միշտ ավելի շատ հետաքրքրում է այն, ինչ թվում է առավել արդիական, հրատապ է այս պահին, ինչը մեզ ուղղակիորեն տանում է դեպի նպատակին հասնելու: Մենք փորձում ենք հաղթանակ կորզել պատերազմում՝ հաղթելով բազմաթիվ անհատական մարտերում և ճակատամարտերում: Մենք մտածում ենք նեղ, լոկալ, արձագանքում ենք այսրոպեական իրավիճակներին, անմիջապես հիմա տեղի ունեցող իրադարձություններին: Իսկ չէ որ սա սահմանափակ և անհեռատեսների ռազմավարություն է: Կյանքում ամեն ինչ փոխկապակցված է: Յուրաքանչյուր իրադարձություն մեկուսացված չէ մյուսներից, այլ շոշափվում է դրանք, յուրաքանչյուրն ունի ոչ միայն տեղական, այլև ավելի լայն համատեքստ: Այս համատեքստը ներառում է ձեր անմիջական

շրջանակից դուրս գտնվող մարդկանց, մարդկային հասարակությանը որպես ամբողջություն և ամբողջ աշխարհին: Այս ասպեկտը ներառում է քաղաքականությունը, քանի որ ժամանակակից աշխարհում յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր արարք ունի քաղաքական մեկնաբանություններ: Այն շոշափում է մշակույթը, լրատվամիջոցները և այն, թե ինչպես եք դուք ներկայանում հանրությանը: Որպես լուրջ ռազմավար, դուք պետք է ընդլայնեք ձեր հորիզոնները բոլոր ուղղություններով՝ ոչ միայն ապագան տեսնելու հեռատեսություն, այլև շրջապատող աշխարհն ավելի լավ ընկալելու ունակություն, նկատելու ավելին, քան ձեր հակառակորդը կարող նկատել: Այդ դեպքում ձեր ռազմավարությունները կդառնան անհասկանալի և անհնար կլինի վերծանելը: Դուք կկարողանաք օգտագործել իրադարձությունների միջև կապերը, մարտերի արդյունքների ազդեցությունը արշավի հետագա ընթացքի վրա և մշակութային իրադարձությունների ազդեցությունը քաղաքական իրադարձությունների վրա: Դուք կտեղափոխեք պատերազմը այնպիսի ոլորտներ, որոնց մասին ձեր հակառակորդները երբեք չեն մտածել՝ նրանց անակնկալի բերելով:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Հազարավոր տարիներ առաջ մարդիկ անջատվեցին կենդանական աշխարհից, դարձան իրականում մարդ և այդ ժամանակվանից այլևս հայացք չնետեցին դեպի հետ: Փոխաբերական իմաստով, այդպիսի էվոլյուցիոն հաջողության բանալին մտածելու ունակությունն էր՝ շրջապատող աշխարհն ավելի հստակ և լայն ընկալելու ունակությունը: Գիշատիչից պաշտպանվելիս կենդանին ապավինում է իր բնազդներին և զգացմունքներին: Նա չի կարող տեսնել այն, ինչ թաքնված է անկյունում կամ գտնվում է անտառի մյուս ծայրում: Մյուս կողմից, մենք՝ մարդիկ, սովորեցինք մեր երևակայությամբ նկարել մի ամբողջ անտառի քարտեզ, ուսումնասիրեցինք վտանգավոր կենդանիների սովորությունները, սովորեցինք նույնիսկ կանխատեսել որոշակի բնական երևույթներ՝ այդպիսով ընդլայնելով մեր պատկերացումները մեզ շրջապատող աշխարհի մասին: Մենք սովորեցինք գուշակել սպասվող վտանգը անուղղակի նշաններով, նախքան այն ակնհայտորեն կառաջանա: Մեր հայացքն ավելի ու ավելի թափանցեց տարածության և ժամանակի մեջ, և դա էր, որ ժամանակի ընթացքում մարդկանց առաջնորդեց դեպի համաշխարհային տիրապետություն:

Սակայն, մի ինչ-որ պահ մարդկային էվոլյուցիան այս ուղղությամբ կանգ առա: Մենք դադարեցինք զարգանալ որպես մտածող էակներ: Չնայած մարդկության առաջընթացին, մեզանից յուրաքանչյուրի մեջ դեռևս ապրում է նույն կենդանին, և մեր այս կենդանական մասը ընդունակ է գործ ունենալ իրականության միայն սահմանափակ մասի հետ, այն բանի հետ, որն անմիջականորեն վերաբերում է իրեն՝ այն անկարող է վերացական մտածելու և դրանից այն կողմ տեսնելու: Այս երկատվածությունը դեռևս առկա է մարդկության մեջ: Մեր անհատականության երկու կողմերը՝ բանականը և կենդանականը, անընդհատ հակասության մեջ են միմյանց հետ, հերթով գերակշռում են, և, հավատացեք, սա բարդացնում է գրեթե յուրաքանչյուր գործողություն, յուրաքանչյուր արարք: Մենք դատում ենք, ծրագրեր ենք կազմում, թե ինչպես հասնել ցանկալի նպատակին, և հանկարծ, իրադարձությունների կիզակետում, նյարդայնանում ենք, կորցնում ենք մեր հանդարտությունը և նպատակը: Մենք խորամանկորեն պլանավորում ենք ձեռք բերել այն, ինչի մասին երազում ենք, բայց երբեք մի պահ չենք կանգ առնում մտածելու համար, թե արդյոք դա մեզ իսկապես անհրաժեշտ է, կամ ինչ հետևանքներ կունենա մեր հաղթանակը:

Հորիզոնների ընդլայնումը զարգանում է մտածելու ունակության միջոցով, բայց շատ հաճախ մթագնում է մեր ներսում գտնվող հուզական, իմպուլսիվ կենդանու՝ մեր երկակի բնույթի ավելի ուժեղ կողմի պատճառով:

Հին հույները ավելի մոտ էին, քան մենք, կենդանիներից մտածող էակների անցմանը: Նրանք գիտակցում էին մարդու երկակիության ողբերգական նշանակությունը, և այդ ողբերգության աղբյուրը տեսնում էին ընկալման սահմանափակության մեջ: Հին ժամանակների դասական ողբերգություններում, ինչպիսին է «Էդիպուս արքան», գլխավոր հերոսը կարող էր հավատալ, որ ինքը գիտի ճշմարտությունը, որ ինքը բավականաչափ գիտի այս աշխարհը դրանում որոշակի գործողություններ կատարելու համար, բայց իրականում նրա ընկալումը սահմանափակվում էր նրան կուրացնող հույզերով և կրքերով: Կյանքի ընդհանուր հեռանկարի միայն մի փոքր մասն է բաց մարդու համար, ուստի նա անխոհեմ է գործում՝ տառապանք պատճառելով իրեն և ուրիշներին: Երբ Էդիպուսը վերջապես հասկանում է իր դերը իրեն պատուհասած դժբախտությունների մեջ, նա կուրացնում է իրեն, և սա ոչ այլ ինչ է, քան նրա ողբերգական սահմանափակումների խորհրդանիշ: Նա կարող էր տեսնել շրջապատող աշխարհը, բայց ի վիճակի չէր ինքն իրեն նայել:

Հույները, սակայն, ճանաչում էին մարդկանց որպես ավելի մեծ բաների հասնելու ներուժ: Աստվածների բնակավայրը՝ Օլիմպոս լեռը, խոյանում էր մահկանացուների աշխարհից վեր: Օլիմպիացիները՝ երկնային կյանքում ապրողները, մահկանացուների բոլոր արարքները տեսնում էին իրենց ափի պես պարզ՝ նրանք տեսնում էին անցյալը, ներկան և ապագան: Մարդիկ նաև աստվածների հետ ընդհանուր գծեր ունեին, ոչ միայն կենդանիների հետ. յուրաքանչյուր մարդ համատեղում էր և՛ կենդանական, և՛ բարձրագույն աստվածային հատկանիշները:Նրանք, ովքեր կարողանում էին տեսնել ավելի հեռու, քան մյուսները, վերահսկել իրենց կենդանական բնույթը և գործելուց առաջ մտածել իրենց գործողությունների մասին, համարվում էին հատուկ, գերազանց տեսակ, և նրանց այդպիսին դարձնողը հենց իրենց բանականության, մտավոր ունակությունների ուժը օգտագործելու ունակությունն էր, այսինքն՝ այն, ինչը մեզ տարբերակում է կենդանիներից: Հույները մարդկային խորամանկության մասին խոսում էին որպես իդեալական որակ՝ այն հակադրելով մարդկային հիմարության հետ (սահմանափակություն, ընկալման նեղություն):

Խորամանկության անձնավորումը կարելի է համարել Ոդիսևսին, հերոս, ով միշտ մտածել է նախքան գործելը: Նա մի անգամ ստիպված էր այցելել Հադես՝ մեռյալների երկիր. մի՞թե սա է պատճառը, որ նա երբեք չի մոռացել իր նախնիների պատմությունը և վաղեմի իրադարձությունները: Նա, ընդհանուր առմամբ, առանձնանում էր հետաքրքրասիրությամբ, մտքի հետաքրքրասիրությամբ, ինչպես նաև մարդկային գործողությունները սթափ գնահատելու ունակությամբ (ինչպես սեփական, այնպես էլ այլ մարդկանց) և հաշվի առնելով դրանց հնարավոր հետևանքները: Այլ կերպ ասած, նա ինչ-որ չափով ուներ ապագան տեսնելու ունակություն, և այդ հմտությունը նրան կապում էր աստվածների հետ: Օժտված սուր մտքով և գործնական գնահատանքով ՝ հեռատես և խորամանկ Ոդիսևսը Հոմերոսի էպիկական ստեղծագործությունների հերոսն էր, բայց այս տեսակի անհատականությունների օրինակներ կան նաև իրական պատմական կերպարների մեջ: Դրանց թվին կարելի է դասել, օրինակ, քաղաքական և ռազմական գործիչ Թեմիստոկլեսին, ինչպես նաև Ալեքսանդր Մակեդոնացուն, ով իրական բարձունքների հասավ (նաև Արիստոտելի դաստիարակությամբ) բարձր ինտելեկտի և ակտիվության համադրության շնորհիվ:

Խելացի մարդը կարող է թվալ սառը, չափազանց ռացիոնալ և անտարբեր կյանքի ուրախությունների նկատմամբ: Դա այդպես չէ: Ինչպես Օլիմպիական աստվածները, որոնք դեմ չէին հաճույքներին: Այդպիս մարդը աշխարհը տեսնում է հեռանկարում, հավասարակշռված է և որոշ չափով անտարբեր, և օժտված է ծիծաղելու ունակությամբ, որը գալիս է լայնախոհության հետ, որը որոշակի թեթևություն է հաղորդում նրա արած ամեն ինչին: Այս հատկանիշները, միասին վերցրած, համապատասխանում են այն բանին, ինչը Նիցշեն անվանում էր «Ապոլոնյան սկզբ»: (Միայն նրանք, ովքեր անկարող են տեսնել իրենց քթից այն կողմ, աշխարհին ընկալում են ձանձրալի լրջությամբ): Ալեքսանդրը՝ մեծ ռազմավար և գործող մարդ, հայտնի էր, առաջին հերթին, իր ուրախ խնջույքներով և տոնակատարություններով:

Ոդիսեւսը սիրում էր արկածներ, հազիվ թե ինչ-որ մեկը կարող էր համեմատվել նրա հետ բոլոր տեսակի հաճույքների փորձի մեջ: Պարզապես նա ավելի խելամիտ էր, ավելի հավասարակշռված, ավելի քիչ կախված էր իր սեփական զգացմունքներից և տրամադրություններից, ուստի նա կարողացավ թույլ չտալ, որ խառնաշփոթն ու ողբերգությունը մտնի իր կյանք: Մարդու այս տեսակը՝ հանգիստ, հավասարակշռված, սրամիտ, հեռատես, հույների մոտ ստացել էր «խորամանկամիտ» անվանումը, իսկ մենք նրան կանվանենք «մեծ ստրատեգ»:

Մենք բոլորս և մեզանից յուրաքանչյուրը առանձին, այս կամ այն չափով ստրատեգներ ենք: Մենք բնականաբար ցանկանում ենք վերահսկել մեր ճակատագիրը, ուստի պայքարում ենք մեր կյանքի վերահսկողության համար՝ գիտակցաբար կամ անգիտակցաբար ձգտելով հասնել այն ամենին, ինչ ուզում ենք: Այլ կերպ ասած, մենք կիրառում ենք ռազմավարություններ, բայց դրանք հաճախ անկեղծ են, պարզունակ և հետևում են իրադարձություններին, այլ ոչ թե կանխատեսում դրանք: Դրանք հաճախ անտրամաբանական են և առաջանում են ինքնաբուխ՝ որպես մեր հուզական արձագանքներ իրադարձություններին: Տաղանդավոր, բայց միջակ ստրատեգները կարող են ունակ լինել ավելի մեծ բաների, բայց քչերն են անձեռնմխելի սխալներից: Հաջողության հասնելու դեպքում նրանք չափազանց ոգևորվում են կամ չափազանց շատ են աշխատում: Ձախողման դեպքում, իսկ ձախողումը անխուսափելի է բոլորի կյանքում, հեշտությամբ շեղվում են ուղղուց:

Ի՞նչն է առանձնացնում մեծ ստրատեգներին ամբոխից: Դա իրենց և շրջապատի մարդկանց խորային տեսնելու, անցյալից սովորելու և ապագայի հստակ ու ճշգրիտ պատկերացում ունենալու ունակությունն է՝ այնքանով, որքանով հնարավոր է կանխատեսել, իհարկե: Նրանք պարզապես ավելին են տեսնում, և դա թույլ է տալիս նրանց պլանավորել երբեմն շատ նշանակալի ժամանակահատվածներ՝ այնքան նշանակալի, որ մյուսները պատկերացում չունեն, թե ինչ են մտածում: Այսպիսի մարդիկ խորանում են խնդրի մեջ՝ ձգտելով վերացնել դրա պատճառները, այլ ոչ թե միայն արտաքին դրսևորումները, և, ի վերջո, նրանք ճշգրիտ են հասնում իրենց նպատակին: Մեծ ստրատեգ դառնալու ձեր ճանապարհին հետևեք Ոդիսևսին, և դուք կբարձրանաք աստվածների մակարդակի: Եվ բանը նրանում չէ, որ ձեր ռազմավարությունները կդառնան հատկապես խորամանկ կամ աներևակայելի խելացի: Դուք հասնում եք ինչ-որ այլ բանի՝ դա որակական ցատկ է:

Մեր աշխարհում, որտեղ մարդիկ անկարող են հաջորդական մտածել, որտեղ նրանք աստիճանաբար կորցնում են մեկ քայլից ավելի առաջ նայելու ունակությունը, որտեղ (անտիկ իմաստով) կենդանական բաղադրիչն ավելի ակնհայտ է, երկարաժամկետ ռազմավարության կիրառումը անխուսափելիորեն ձեզ կբարձրացնի մնացածից վեր:

Մեծ ստրատեգ դառնալու համար, այսինքն՝ երկարաժամկետ ռազմավարություն մշակելու արվեստին տիրապետելը չի պահանջի երկար տարիների ուսուցում, և նույնիսկ ավելին՝ ձեր անձի ամբողջական վերափոխում: Ձեզանից միայն մեկ բան կպահանջվի՝ ավելի արդյունավետ օգտագործել այն, ինչով օժտված եք՝ ձեր խելքը, ողջամտությունը, տրամաբանելու ունակությունը, ձեր հեռատեսությունը: Քանի որ երկարաժամկետ ռազմավարությունը ի հայտ եկավ և զարգացավ որպես ռազմական խնդիրների լուծման միջոց, դա ամբողջովին ռազմական հասկացություն է: Եվ ծանոթանալով, թե ինչպես է տեղի ունեցել դրա զարգացումը, մենք կկարողանանք հասկանալ, թե ինչպես այն կիրառել մեր առօրյա կյանքում:

Պատերազմների պատմության արշալույսին իշխանության էին գալիս ռազմավարական մտածողություն ունեցող և իրենց խորամանկ ծրագրերը կյանքի կոչելու կարողությամբ կառավարիչները կամ զորավարները: Նրանք կարող էր հաղթել ճակատամարտերում, նվաճել կայսրություններ կամ, ծայրահեղ դեպքում, պաշտպանել իրենց սեփական քաղաքը կամ երկիրը: Սակայն այս մակարդակում ռազմավարությունը որոշակի մարտահրավերներ է ներկայացնում: Մարդկային ցանկացած այլ գործունեությունից ավելի, պատերազմը առաջացնում է զգացմունքների բռնի պոռթկումներ՝ արթնացնելով մարդկանց կենդանական բնույթը: Պատերազմ պլանավորելիս միապետը պետք է հաշվի առներ այնպիսի գործոններ, ինչպիսիք են տեղանքի իմացությունը և իր սեփական ուժերի հարաբերակցությունը հակառակորդի նկատմամբ: Հաջողությունը լիովին կախված էր այդ գործոնները հասկանալու և սթափ գնահատելու նրա ունակությունից:

Սակայն հաճախ ինչ-որ բան խանգարում էր, կարծես աչքերը պղտորվում էին: Նրանց պատում է ուժեղ զգացմունքներն ու ցանկությունները, որոնց չեն կարող դիմակայել: Հաղթանակի ծարավից տոգորված տիրակալները թերագնահատում են հակառակորդի ուժերը կամ գերագնահատում՝ սեփականը: Երբ պարսից թագավոր Քսերքսեսը մ.թ. ա. 480 թվականին գրավեց Հունաստանը, նա հավատում էր, որ մշակել է անթերի ռազմավարական ծրագիր: Բայց չափից շատ բան հաշվի չէր առել, և ձախողումը չուշացավ: Պատերազմ պլանավորելիս միապետը պետք է հաշվի առնի այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են տեղանքի իմացությունը և հակառակորդի ուժերի հետ իր ուժերի հարաբերակցությունը: Հաջողությունը լիովին կախված է այն հասկանալու և սթափ գնահատելու կարողությունից:

Մյուս տիրակալները հաղթում են ճակատամարտ առ ճակատամարտ միայն այն բանի համար, որպեսզի զգան հաղթանակի արբեցող ազդեցությունը: Նրանք չեն կարողանում ժամանակին կանգ առնել՝ սնուցելով ատելություն, անզիջումություն, անվստահություն և վրեժխնդրության անհագ ծարավ շրջապատի նկատմամբ: Նրանք պատերազմ են մղում միաժամանակ մի քանի ճակատներում՝ ի վերջո կրելով լիակատար պարտություն: Այդպիսին էր Ասորեստանյան կայսրության փլուզումը, որի մայրաքաղաք Նինվեն ընդմիշտ կուլ գնաց ավազներին: Նման դեպքերում մարտերում հաղթանակները ոչինչ չեն բերում, բացի վտանգից և ռիսկից, նվաճողին ներքաշելով հաջորդական հարձակումների և հակագրոհների կործանարար հորձանուտի մեջ:

Դեռևս հին ժամանակներում, ստրատեգներն ու պատմաբանները՝ սկսած Սուն Ցզիից մինչև Թուկիդիդես, լավ գիտակցում էին այդպիսի ինքնաոչնչացնող ցիկլերի վտանգները և փորձում էին գտնել պատերազմ վարելու ավելի ռացիոնալ մեթոդներ: Առաջին հերթին անհրաժեշտ էր խորհրդածել հենց նոր ավարտված ճակատամարտի մասին:

Ենթադրենք, որ դուք հաղթանակ եք տարել, բայց դա կբարելավի՞, թե՞ կվատթարացնի ձեր իրավիճակը: Այս հարցին պատասխանելու համար դուք պետք է հաշվի առնեք

հետագա քայլերը և, օգտագործելով տրամաբանական դատողություններ, հաշվարկեք երրորդ և չորրորդ ճակատամարտերի հետևանքները, քանի որ դրանք բոլորը կապված են ինչպես մեկ շղթայի օղակները: Սա հանգեցնում է ապագա արշավանքի մտքում պատկերացման, որի ընթացքում ստրատեգը սահմանում է իրատեսական, հասանելի նպատակ և գծում է դրան հասնելու ուղին շատ առաջ շարժվելուց հետո: Առանձին ճակատամարտերը նշանակալից են միայն այնքանով, որքանով դրանք հնարավոր են դարձնում հետագա փուլերը: Բանակը կարող է նույնիսկ դիտավորյալ պարտվել միջանկյալ ճակատամարտերից մեկում, եթե այս պարտությունը երկարաժամկետ ռազմավարության մաս է կազմում, որը, ի վերջո, հանգեցնում է հաղթանակի: Միայն մեկ հաղթանակ է կարևոր՝ արշավանքի վերջնական հաղթանակը, և ամեն ինչ պետք է ենթարկվի այս նպատակին:

Այս տեսակի ռազմավարությունը որակական առավելություն է տալիս: Պատկերացնենք գրոսմայստերին շախմատի խաղալիս: Նա չի կենտրոնանում միայն հաջորդ քայլի վրա, չի տեղաշարժում խաղաքարը՝ հիմնվելով միայն հակառակորդի քայլի վրա: Նա պատկերացնում է խաղը բազմաթիվ քայլերի շղթայում, մշակելով ռազմավարական ծրագիր և որոշակի փուլում կարող է զոհաբերել զինվորներ՝ ավելի հզոր խաղաքարեր հետագայում խաղադաշտ դուրս բերելու համար: Ամբողջ արշավի տեսանկյունից հրամանատարը մտածելով նոր, ավելի մեծ խորություն է հաղորդում իր ռազմավարությանը: Նա ավելի ու ավելի է դիմում քարտեզին:

Այդ մակարդակի պատերազմը ստրատեգից պահանջում է լուրջ և խորը մտորումներ, նա պետք է մտածի իրադարձությունների հնարավոր զարգացման բոլոր ուղղությունների մասին՝ նախքան արշավ սկսելը: Նա պարզապես պետք է իմանա և հասկանա աշխարհը: Հակառակորդը ընդհանուր պատկերի ընդամենը մի մասն է: Ստրատեգը պետք է նախատեսի դաշնակիցների և հարակից պետությունների արձագանքը: Նրանց նկատմամբ ցանկացած սխալ քայլ կարող է ոչնչացնել հիանալի մտածված պլանը: Անհրաժեշտ է նաև պատկերացնել պատերազմի ավարտից հետո խաղաղ ժամանակը: Պետք է հասկանալ, թե ինչի է ընդունակ բանակը, որքան կարող է դիմանալ, և ավելին չպահանջել: Պետք է իրատես լինել:

Ստրատեգի միտքը պետք է նախատեսի ամեն ինչ և հաղթահարի առաջիկա առաջադրանքի բոլոր դժվարությունները, հաղթահարի բոլոր խոչընդոտները, և այս ամենը նախքան առաջին հարվածը հասցնելը: Այնուամենայնիվ, այս մակարդակի ռազմավարական մտածողությունը խոստանում է անթիվ առավելություններ: Այսուհետ ռազմի դաշտում հաղթանակը չի կարող շփոթության մեջ գցել ռազմավար-զորավարին՝ գայթակղելով նրան չմտածված քայլ կատարել և դրանով իսկ անհաջողության մատնել արշավը, և պարտությունը նրան թամբից դուրս չի գցի: Երբ տեղի է ունենում անսպասելին, իսկ անսպասելին միշտ պետք է կանխատեսել պատերազմում, մեծ ստրատեգի կողմից ինքնաբերաբար կայացված որոշումը դեռևս հաշվի է առնում արշավանքի հիմնական, ընդհանուր նպատակները, որոնք ուրվագծվում են հեռվում, հորիզոնում: Իր զգացմունքները ստորադասելով ռազմավարական մտքին՝ նա ուժ և նոր հնարավորություններ է ձեռք բերում արշավի ընթացքը կառավարելու համար: Նույնիսկ մարտի թեժ պահին նա պահպանում է հեռանկարի տեսլականը: Նման առաջնորդին անհնար է պատկերացնել ավերիչ հույզերի գերության մեջ, որոնք ժամանակին կործանեցին այդքան բանակներ և պետություններ: Արշավների անցկացման այդպիսի սկզբունքը համեմատաբար վերջերս անվանել են երկարաժամկետ կամ մեծ ռազմավարություն, սակայն տարբեր ձևերով այն գոյություն է ունեցել անհիշելի ժամանակներից: Այս սկզբունքը հստակ երևում է Ալեքսանդրի կողմից Պարսկաստանի նվաճման ընթացքում, Հռոմեական և Բյուզանդական

կայսրություններում, որոնք հսկայական տարածքներ էին վերահսկում մի քանի բանակների օգնությամբ, մոնղոլների ռազմական արշավներում, ինչպես Եղիսաբեթ I-ը վարվեց իսպանական մեծ Արմադայի հետ, Հաբսբուրգների դեմ Մարլբորոյի դուքսի փայլուն գործողություններում: Նոր պատմության մեջ Հյուսիսային Վիետնամը սկզբում հաղթահարեց ֆրանսիացիներին, այնուհետև հակահարված տվեց Միացյալ Նահանգներին: Վերջինի դեպքում վիետնամացիները չհաղթեցին ոչ մի խոշոր ճակատամարտում, և այս փորձը ռազմավարական արվեստի գերազանց, վիրտուոզ կիրառման նկարագրադում է:

Ռազմական պատմությունը մեզ ցույց է տալիս, որ երկարաժամկետ ռազմավարության մեջ գլխավորը (խոսքը վերաբերվում է, թե ինչն է այն տարբերում պարզունակ, տնային ռազմավարությունից), ամեն ինչ նախապես մտածելու ունակությունն է :

Մեծ ատրատեգները մտածում և պլանավորում են շատ ավելի վաղ, քան գործելը: Նման պլանավորումը պարզապես տեղեկատվություն հավաքելու և վերլուծելու արդյունք չէ: Այն հիմնված է աշխարհը անտարբեր և հանգիստ դիտարկելու, արշավի տեսանկյունից մտածելու և խաբուսիկ, մոլորեցնող կամ այլ կերպ աննկատ քայլեր ու գործողություններ ձեռնարկելու ունակության վրա, որոնց նպատակը ուրիշների համար պարզ է դառնում միայն ժամանակի ընթացքում: Պլանավորման այս մեթոդը պարզապես նպատակ չունի թշնամուն խաբել կամ շփոթեցնել: Այն ստրատեգին տալիս է հանգստություն, հեռանկարի զգացում և ճկունություն՝ իրավիճակին համապատասխան որոշումները անմիջապես փոխելու համար՝ միաժամանակ կենտրոնանալով իր մտքում դրված վերջնական նպատակի վրա:

Երկարաժամկետ ռազմավարությունը բնութագրվում է չորս հիմնական սկզբունքներով, որոնք բխում են այս արվեստի ամենատաղանդավոր վարպետներից վերցված պատմական օրինակներից: Որքան շատ կիրառեք այս սկզբունքները ձեր ծրագրերում, այնքան լավագույն արդյունքներ կհասնեք:

Առաջին սկզբունքը՝ կենտրոնացեք հիմնական նպատակի վրա, ձեր սեփական ճակատագրի վրա: Իսկական ստրատեգ դառնալու առաջին քայլը՝ այն քայլն է, որն ամեն ինչ իր տեղը կդնի, արշավի հենց սկիզբից: Պետք է սկսել սահմանելով հստակ, մանրամասն մշակված և իմաստալից նպատակ՝ բովանդակալից նպատակ, որն արմատավորված պետք է լինի իրականության մեջ :

Որքան հաճախ է մեզ թվում, որ նպատակ ունենք և ունենք նպատակին հասնելու պլան: Բայց, որպես կանոն, մենք միայն ինքներս մեզ խաբում ենք: Մենք նպատակ չունենք, այլ այն, ինչ մենք ընդունում ենք որպես նպատակ, դրանք միայն ցանկություններ են: Զգացմունքներն ու հույզերը մեզ անորոշ ցանկություններ են ներշնչում: Մենք ցանկանում ենք համբավ, հաջողություն, վստահություն ՝ ինչ-որ նշանակալի, բայց անորոշ, վերացական բան: Այս անորոշությունն ի սկզբանե խարխլում է մեր կազմած պլանները՝ դրանք դարձնելով քաոսային և խառնաշփոթ: Մեծ, իրական ստրատեգները առանձնանում են, բայց դա միանգամայն հնարավոր է նաև ձեզ համար՝ որոշակի, մանրամասն, քայլ առ քայլ պլանների առկայություն: Ամեն օր վերադառձեք դրանց, մտածեք ոչ միայն այն մասին, թե ինչպես հասնել ձեր նպատակներին, այլ նաև այն մասին, թե ինչ կլինի, երբ հասնեք դրանց: Մարդկային հոգեբանության հատուկ օրենքն ասում է, որ հստակ և շիտակ պատկերացնելով նպատակը՝ հնարավոր է հասնել դրա իրականացմանը:

Նապոլեոնի համար հստակ և սահմանված նպատակ ունենալը միշտ էլ կարևոր էր: Նա այն պատկերացնում էր մտքում՝ արշավի սկզբում, մինչև վերջին ճակատամարտը: Իր խորհրդականների հետ քարտեզներ ուսումնասիրելով՝ նա երբեմն մարգարեաբար նշում

էր այն կետը, որտեղ արշավը ավարտվելու էր, որտեղ պետք է մղվեր վերջնական ճակատամարտը: Սա կարող էր թվալ էքսցենտրիկություն կամ սուրճի բաժակ նայելու նման մի բան, ոչ միայն այն պատճառով, որ պատերազմը կարող էր անսպասելի շրջադարձեր ունենալ, այլև այն պատճառով, որ Նապոլեոնի դարաշրջանի աշխարհագրական քարտեզները բավականին անվստահելի էին: Եվ այնուամենայնիվ, նրա կանխատեսումները կրկին ու կրկին իրականանում էին: Նա ոչ պակաս հստակ պատկերացնում էր, թե ինչ է պատահելու արշավի ավարտից հետո՝ խաղաղության պայմանագրի ստորագրումը, դրա պայմանները, նույնիսկ ռուսական ցարի կամ ավստրիական կայսեր տեսքն ու վարքագիծը, և թե ինչպես այս կոնկրետ նպատակին հասնելը կազդի հաջորդ արշավի վրա:

Նպատակների հստակ տարանջատումը օգնում է սահմանել ձեր բոլոր գործողությունների և արարքների ուղղությունը՝ թե՛ մեծածավալ, թե՛ փոքր և աննշան: Սա հեշտացնում է կարևոր որոշումների կայացումը: Եթե հանկարծ առջևում հայտնվի որևէ անսպասելի, շլացուցիչ գայթակղություն, դուք կհասկանաք, թե ինչպես և ինչու դիմադրել դրան: Դուք հեշտությամբ կհասկանաք, թե երբ է անհրաժեշտ զոհաբերել խաղաքարը, նույնիսկ զիջել հաղթանակը մարտում, եթե դա ծառայում է վերջնական նպատակին: Դուք ամբողջությամբ կենտրոնացած եք արշավը հաղթելու վրա և ձեզ համար ուրիշ ոչինչ կարևոր չէ:

Ձեր նպատակները պետք է հիմնված լինեն իրականության վրա և սերտորեն կապված լինեն դրա հետ: Եթե դրանք ձեզ համար անհասանելի են, եթե դուք պարզապես չեք կարող հասնել այն ամենին, ինչի մասին երազում եք, դա կհանգեցնի դաժան հիասթափության, և վտանգ կա, որ հիասթափությունը կվերածվի պարտվողականության: Մյուս կողմից, դժվար է պահպանել պլանավորվածի իրականացման նկատմամբ հետաքրքրությունը, եթե նպատակին պակասում է խորությունը և մասշտաբը, նույնիսկ վեհությունը:Մի ամաչեք ձեր սեփական վճռականությունից և ճնշումից: Լայն իմաստով, դուք աշխատում եք կատարել այն, ինչ Ալեքսանդր Մակեդոնացին զգում էր որպես իր աստվածային նպատակ, և Ֆրիդրիխ Նիցշեն անվանում էր կյանքի գործ, այն, ինչ թվում է, որ ձեզ բերում է այն ամենը, ինչ դուք գիտեք և կարող եք, ձեր բնական հակումները, ունակությունները, տաղանդները: Եթե ձեզ բախտ վիճակվի և կարողանաք որոշել ձեր կյանքի նպատակը, դա ձեզ կոգեշնչի և կառաջնորդի կյանքի ողջ ընթացքում:

Ձեր ընտրած նպատակի էությունն ու բնույթը չափազանց կարևոր է: Որոշ առաջադրանքներ, եթե մտածեք, ժամանակի ընթացքում կարող են ոչ թե օգուտ բերել, այլ վնաս: Երկարաժամկետ ռազմավարության նպատակն իր իրական իմաստով ապագա աճի համար ամուր հիմք կառուցելն է, ձեր դիրքերը ամրապնդելը, ուժ ձեռք բերելը: Երբ իսրայելացիները 1967 թվականի Վեցօրյա պատերազմի ժամանակ գրավեցին Սինայի անապատը, թվում էր, թե դա խելամիտ քայլ է, որը թույլ է տալիս ստեղծել մի տեսակ բուֆերային գոտի, որը բաժանում է Իսրայելը Եգիպտոսից: Դա իրականում նշանակում էր տարածքի ընդլայնում, որը պետք է պարեկվեր և վերահսկվեր, ինչի արդյունքում դա եգիպտացիների կողմից կայուն թշնամանք առաջացրեց: Բացի այդ, Սինայը հուսալիորեն պաշտպանված չէր հանկարծակի հարձակումից, որն իրականացվեց 1973 թվականին, այսպես կոչված, Յոմ Կիպուրի պատերազմի ժամանակ: Ակնհայտ է, որ անապատին տիրանալու հնարավորությունը գայթակղիչ էր թվում, իսկ իրականում դա լուրջ անախորժությունների պատճառ դարձավ, ամենևին էլ չնպաստեց անվտանգության ամրապնդմանը: Հետևաբար, երկարաժամկետ ռազմավարության առումով կոպիտ սխալ էր: Բառեր չկան, երբեմն հեշտ չէ հասկանալ, թե որոնք կլինեն նախատեսված նպատակին հասնելու երկարաժամկետ արդյունքները, բայց որքան ավելի լուրջ, մտածված և

իրատեսորեն մոտենաք հնարավոր տարբերակների ուսումնասիրությանը, այնքան ավելի քիչ հավանական է, որ հաշվարկներում սխալվեք:

Երկրորդ սկզբունքը՝ լայնացրեք մտահորիզոնը: Երկարաժամկետ ռազմավարական պլանը մեծապես կախված է հեռանկարը տեսնելու ունակությունից, հակառակորդից ավելի հեռու տեսնելու ունակությունից՝ ինչպես ժամանակի, այնպես էլ տարածության մեջ: Պայծառատեսությունը յուրահատուկ չէ մարդուն և իր բնույթով մեզ բնորոշ չէ: Մենք ապրում ենք ներկայով, մեր գիտակցությունը արմատավորված է դրանում, բացի այդ, մեր սուբյեկտիվ փորձը և ցանկությունները նեղացնում են ընկալման շրջանակը: Դրանք մի տեսակ ձևավորում են բանտի պատեր, որում բանտարկված ենք: Ձեր ռազմավարական խնդիրն է ստիպել ինքներդ ձեզ կոտրել այդ պատերը, ընդլայնել ձեր տեսադաշտը և շրջապատող աշխարհը ավելի հեռատես հայացքով դիտարկել: Սովորեք սթափ մտածել դրա մասին՝ առանց ցանկալին իրականության տեղ ընդունելու, գնահատեք հանգամանքներն ու փաստերը ըստ այն բանի, թե դրանք իրականում ինչ են կամ ինչ դեր կարող են խաղալ ապագայում, այլ ոչ թե ըստ այն բանի, թե ինչպես կցանկանայիք տեսնել դրանք: Յուրաքանչյուր իրադարձություն ունի իր պատճառը, ամեն ինչ փոխկապակցված է պատճառահետևանքային շղթայի հետ, ինչը հանգեցնում է նրան, որ դրանք, այդ իրադարձությունները տեղի են ունենում: Դուք պետք է դա հիշեք և ավելի խորը ուսումնասիրեք իրականությունը, այլ ոչ թե սահմանափակվեք մակերեսին սահելով: Որքան մոտ լինեք օբյեկտիվությանը, այնքան ավելի կատարյալ կլինի ձեր ռազմավարությունը և ավելի հեշտ կլինի նպատակին հասնելու ճանապարհը:

Դուք կարող եք առաջին քայլը կատարել այս ուղղությամբ՝ փորձելով իրավիճակը տեսնել ուրիշների՝ այդ թվում, իհարկե, ձեր հակառակորդների աչքերով, նախքան պատերազմի մեջ մտնելը: Մեր սեփական մշակութային կողմնակալությունները, նախապաշարմունքներն ու նախատրամադրվածությունները մեզ խանգարում են օբյեկտիվորեն ընկալել մեզ շրջապատող աշխարհը: Ուրիշների աչքերով տեսնելու ունակությունն ու անհրաժեշտությունը քաղաքական կոռեկտության, մեղմության կամ որևէ անհասկանալի մանրակրկիտության հարց չէ: Դա անհրաժեշտ և օգտակար է ձեզ համար: Դա ձեր օգտին է, քանի որ թույլ է տալիս բարձրացնել ձեր մտահղացումների և ռազմավարական զարգացումների արդյունավետությունը:

Վիետնամի պատերազմի ժամանակ հյուսիսվիետնամական ստրատեգները ամենալուրջ ձևով ուսումնասիրեցին ԱՄՆ-ում մշակութային իրավիճակը: Նրանց ուշադրության առարկան հասարակությունում առկա տրամադրություններն էին, հասարակական կարծիքի տատանումները: Նրանք փորձում էին հասկանալ, թե ինչպես է աշխատում այս երկրի քաղաքական համակարգը, ինչ ազդեցություն ունի հեռուստատեսությունը մարդկանց վրա: Մյուս կողմից, ամերիկացի ստրատեգները հայտնաբերեցին ամոթալի մակերեսային, նվազագույն պատկերացում իրենց համար օտար Վիետնամի մշակույթի մասին, լինի դա Հարավային, որտեղ ամերիկացիներին էին աջակցում, թե Հյուսիսային, որը փորձում էր դիմադրություն ցույց տալ: Կոմունիզմի տարածումը ցանկացած գնով կանխելու իրենց սեփական ցանկությամբ կուրացած՝ նրանք չկարողացան հաշվի առնել Հյուսիսային Վիետնամի ժողովրդի մշակույթի և կրոնի շատ ավելի լուրջ և խորը ազդեցությունը պատերազմ վարելու իրենց սեփական մեթոդների վրա: Այս լուրջ ռազմավարական սխալ հաշվարկի արդյունքը ջախջախիչ և ամոթալի ձախողում էր, որը բոլորը հիշում են:

Իսկական ստրատեգը, ինչպես զգայուն ալեհավաք, գիտակցում է ցանկացած իրավիճակի քաղաքական հիմքերը: Քաղաքականությունը սեփական շահերը առաջ մղելու

և պաշտպանելու արվեստ է: Դուք կարող եք մտածել, որ քաղաքականությունը հիմնականում կուսակցությունների և խմբակցությունների տիրույթն է, բայց իրականում մեզանից յուրաքանչյուրը, ի թիվս այլ բաների, քաղաքական էակ է, որը ձգտում է պաշտպանել կամ ամրապնդել իր դիրքերը: Ձեր վարքագիծը ուրիշների նկատմամբ, յուրաքանչյուր գործողություն, միշտ ունի քաղաքական հետևանքներ, քանի որ մարդիկ վերլուծում են այն՝ հաշվարկելով իրենց համար հնարավոր հետևանքները՝ անկախ նրանից, թե դա կվնասի իրենց, թե կօգնի: Անիմաստ է հաղթել մարտում՝ պոտենցիալ դաշնակիցներից խզելու կամ, ավելի վատը՝ նոր թշնամիներ ձեռք բերելու գնով:

Հաշվի առնելով դա դուք պետք է կառուցեք ձեր երկարաժամկետ ռազմավարական ծրագիրը նպատակ ունենալով, որպեսզի արդյունքում ստանաք ուրիշների աջակցությունը՝ ստեղծելով և ամրապնդելով հիմքերը: Մ.թ. ա. 49 թվականին Հռոմում քաղաքացիական պատերազմի ժամանակ Հուլիոս Կեսարը ստիպված էր դիմակայել Պոմպեոսին՝ զգալի փորձ ունեցող հրամանատարին: Կեսարին հաջողվեց առավելության հասնել այն բանի շնորհիվ, որ, պլանավորելով իր քայլերը, նա անընդհատ ուշադրությամբ հետևում էր հասարակական կարծիքին, տեղի ունեցածի արձագանքին: Նրան պակասում էր Սենատում աջակցությունը, սակայն դա փոխհատուցվում էր հռոմեացիների հավանությամբ: Կեսարը հոյակապ քաղաքական գործիչ էր շնորհիվ իր զարմանալի զգացողության և ժողովրդի մեջ խորը, ինտուիտիվ մակարդակում, մտքի զգացումը ըմբռնելու և նրանց ամենափոքր տատանումները որսալու ունակության: Նա հասկանում էր մարդկանց ձգտումները, մարդկային եսասիրությունը, և նա կառուցում էր իր ռազմավարությունը՝ հաշվի առնելով ամեն բան: Այս համատեքստում քաղաքական գործիչ լինելը նշանակում է հասկանալ մարդկանց՝ աշխարհին նայել նրանց աչքերով:

Երրորդ սկզբունքը՝ կտրեք արմատները: Աշխարհում, որտեղ իշխում է տեսանելիությունն ու արտաքին տպավորությունները, դժվար է, երբեմն գրեթե անհնար է որոշել խնդրի իրական աղբյուրը, հաստատել դրա առաջացման հիմնական պատճառը: Թշնամու դեմ պայքարի երկարաժամկետ ռազմավարական ծրագիր մշակելու համար հարկավոր է իմանալ, թե կոնկրետ ինչն է մղում նրան կամ որն է նրա ուժի աղբյուրը: Շատ ու շատ պատերազմներ և մարտեր անհույս ձգձգվում են այն փաստի պատճառով, որ ոչ մեկը, ոչ էլ մյուսը չեն կարողանում որոշել, թե ինչպես վճռական հարված հասցնել հակառակորդին արմատից կտրելու համար: Լուրջ ստրատեգը պետք է լինի ոչ միայն հեռատես, այլև խորաթափանց, ոչ միայն տեսնի և հասկանա, թե ինչ է կատարվում շուրջը, այլև հասկանա, թե ինչն է դրա հետևում թաքնված:

Մտածեք, խորհրդածեք, խորը փորեք և մի՛ շփոթեք արտաքին տեսքը իրականության հետ: Բացահայտեք խնդրի արմատները, և այդ ժամանակ կկարողանաք վերացնել դրանք, կտրել դրանք և հասնել պատերազմի լիակատար և անդառնալի ավարտին կամ խնդրի լուծմանը:

Երբ կարթագենացի հրամանատար Հանիբալ Բարկան գրավեց Իտալիան մ.թ.ա. 218 թվականին, շատ հռոմեացի զորավարներ պայքարում էին նրան զսպելու համար, բայց ապարդյուն: Հռոմեական հրամանատարներից մեկը, որը հետագայում ստացավ Սցեպիոն Աֆրիկացի անունը, այլ կերպ նայեց իրավիճակին: Խնդիրը հենց Հանիբալը չէր, Իսպանիայում նրա ամուր դիրքերը և նույնիսկ Կարթագենից ծովով անհրաժեշտ ամեն ինչ ստանալու հնարավորությունը: Խնդիրն ինքնին Կարթագենն էր՝ մի երկիր, որտեղ Հռոմը ատում էին՝ այն համարելով իրենց ամենավատ և անհաշտ թշնամին: Փոխանակ փորձելու հաղթել Հաննիբալի Իտալիայում, այս փայլուն մարտիկը, հարձակվեց Կարթագենի վրա, որի արդյունքում Հաննիբալը ստիպված եղավ լքել Իտալիան և շտապել պաշտպանել իր

հայրենիքը: Սակայն հարձակումը պարզապես խորամանկություն չէր Հաննիբալին Իտալիայից դուրս բերելու համար: Ներխուժումը իրական էր, Կարթագենը հարձակման ենթարկվեց մեծ հռոմեական բանակի կողմից:

Սցեպիոնի ռազմավարական պլանը կատարյալ էր: Հռոմեացի հրամանատարը ոչ միայն հաղթեց Հաննիբալին ճակատամարտում, այլև ոչնչացրեց Կարթագենը՝ վերացնելով Հռոմի խաղաղությանը մշտապես սպառնացող մրցակցին:

Երկարաժամկետ ռազմավարության մի մասը, որը կապված է պատճառների վերացման հետ, այն է, թե ինչպես կարելի է տեսնել վտանգները առաջացման ամենավաղ փուլում, դիտարկել դրանց ծիլերը և արմատախիլ անել նախքան դրանք այնքան կմեծանան, որ անհնար կլինի հաղթահարել: Մեծ ստրատեգը հասկանում է, թե որքան կարևոր է ժամանակին գործել:

Չորրորդ սբունքը՝ նպատակին հասնելու ճանապարհին ընտրեք շրջանցող ճանապարհներ: Ամենամեծ վտանգը, որին կարող եք հանդիպել ռազմավարական արվեստում, երբ ստիպված է լինում ժամանակ առ ժամանակ պայքարել, պատասխանել այն ամենին, ինչ անում է հակառակորդը, նախաձեռնության կորուստն է: Դրանից, իհարկե, կարելի է խուսափել, եթե նախապես պլանավորեք ձեր գործողությունը, բայց կարևոր է նաև հմտորեն և նրբանկատորեն պլանավորել, այստեղ՝ մրցակցին գերազանցելու համար անհրաժեշտ կլինի շրջանցելու ունակություն: Թույլ մի տվեք թշնամուն հասկանալ, թե ինչ եք մտածում, և ձեր կողմից հսկայական առավելություն կլինի:

Այսպիսով, թող ձեր առաջին քայլը լինի ընդամենը մանևր, որի նպատակն է դիտարկել հակառակորդի արձագանքը և դրանից դատել նրա մտադրությունները: Հարվածեք հակառակորդին ուղիղ, և նա հաջորդ հարձակումը հետ մղելու համար կարձագանքի համապատասխանաբար՝ գրավելով պաշտպանական դիրք: Սակայն, եթե նրանք չկարողանան որոշել ձեր հարվածի ուղղությունը, կամ սխալ գնահատեն այն, կամ եթե դուք կարողանաք շփոթեցնել նրանց ձեր գործողություններով, ապա նրանք անօգնական և կուրացած կլինեն: Ամենակարևորը ձեր հույզերը վերահսկելն է, չդավաճանել ձեր մտադրությունները և ձեր գործողությունները պլանավորել մի քանի քայլ առաջ՝ փորձելով ամբողջ խաղադաշտը ձեր մտքում պահել:

Աշխատելով ոչ թե առանձին պայքարի, այլ ընդհանուր առմամբ արշավի մակարդակում, դուք պետք է հիշեք, թե որքան կարևոր է առաջին քայլը: Այս քայլը պետք է լինի մեղմացված, աննկատելի, որպեսզի ձեր մտադրությունները հնարավորինս դժվար լինի կռահել: Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում ամերիկյան Պերլ Հարբոր բազայի Ճապոնական ռմբակոծությունը լիովին անակնկալ էր, բայց որպես արշավի սկզբում առաջին քայլ, այս հարձակումը ձախողվեց: Ճապոնացիները շատ արագ և հստակ ցույց տվեցին իրենց մտադրությունները՝ առաջացնելով վրդովմունքի փոթորիկ և խթանելով ամերիկյան հասարակական կարծիքը, նրանք հասան նրան, որ ամերիկացիները վճռեցին պատերազմ մղել մինչև արյան վերջին կաթիլը, և դա այն դեպքում, երբ ռազմական առումով ԱՄՆ-ն այն ժամանակ շատ ավելի բարձր էր, քան Ճապոնիան: Բոլոր հանգամանքներում, արշավի առաջին քայլը պահանջում է հատուկ ուշադրություն: Այն որոշում է ապագա արշավի ռիթմն ու արագությունը, թշնամու վերաբերմունքը և սահմանում ձեր ապագա շարժման ուղղությունը՝ ցանկալի է, իհարկե, ընտրել ճիշտը:

Պրուսական պատերազմի տեսաբան Կարլ ֆոն Կլաուզևիցը դիպուկ նկատել է, որ պատերազմը քաղաքականության շարունակությունն է այլ միջոցներով: Նա նկատի ուներ, որ յուրաքանչյուր ազգ ունի իր սեփական նպատակները՝ անվտանգություն,

բարգավաճում, բարեկեցություն, որոնք սովորաբար ձեռք են բերվում քաղաքական միջոցներով: Սակայն, եթե մեկ այլ ազգ կամ ներքին թշնամի միջամտում է այդ նպատակներին, պատերազմը այդ միջամտության բնական հետևանքն է: Պատերազմի նպատակը երբեք հաղթանակը չէ մարտադաշտում կամ պարզապես տարածքների գրավումը, այն մղվում է քաղաքական նպատակների հասնելու համար, որոնց հնարավոր չէ հասնել բռնությունից բացի որևէ այլ միջոցով:

Երբ պատերազմում պարտվում են, սովորաբար մեղադրում են զինվորականությանը, բանակին: Երբեմն մենք, այնուամենայնիվ, հասնում ենք այն քաղաքական գործիչներին, որոնք, ըստ էության, պատերազմ էին հայտարարել: Վիետնամի պատերազմի ընթացքում և դրանից հետո ԱՄՆ կառավարությունը, որն անզոր էր ստեղծված իրավիճակում, ուղղակիորեն մեղադրվեց ձախողման համար: Սակայն ավելի հաճախ հետագա վերլուծությունը կենտրոնանում է զինվորականների գործողությունների վրա: Մենք վերլուծում ենք մարտերի ընթացքը, խորանում քարտեզների վրա և քննադատում հրամանատարների որոշումները: Չնայած զինվորականները, իհարկե, արշավի անմիջական մասնակիցներն են, իրական խնդիրը նրանց մեջ չէ, այլ երկարաժամկետ ռազմավարական պլանի: Հետևելով ֆոն Կլաուզևիցի տրամաբանությանը, պատերազմում պարտությունը քաղաքականության ձախողում է: Սա նշանակում է, որ պատերազմի նպատակները և այն մղող քաղաքականությունը կտրված են իրականությունից, միջոցները՝ անբավարար, իսկ քաղաքական գործիչները կարճատես են՝ անտեսելով որոշակի գործոններ:

Այս գաղափարը պետք է դառնա ստրատեգի փիլիսոփայություն: Եթե ինչ-որ տեղ ինչ-որ բան չի հաջողվում, մարդկանց համար սովորական է մեղավորներ փնտրել: Բայց թող այդպիսի հիմարություններով զբաղվեն ուրիշները, նրանք, ովքեր սեփական հիմարությունից այն կողմ չեն տեսնում: Թող ուրիշները, ովքեր չեն կարող տեսնել իրենց քթից այն կողմ, զբաղվեն նման հիմարությամբ: Դուք ամեն ինչ տեսնում եք այլ լույսի ներքո: Եթե ձախողումը տեղի է ունենում բիզնեսում, քաղաքականության մեջ, կյանքում՝ փնտրեք դրա պատճառը սկզբնական դրվածքի մեջ, որը հանգեցրել է այդ ձախողմանը: Ընդհանուր ուղղությունը սխալ է ընտրվել: Սա նշանակում է, որ մենք ինքներս հիմնականում մեր սեփական անհաջողությունների մեղավորներն ենք: Եթե մենք ավելի զգույշ, իմաստուն և հեռատես քաղաքական գործիչներ լինեինք, վտանգից հնարավոր կլիներ խուսափել: Այնպես որ, եթե ինչ-որ բան սխալ է ընթանում, նայեք ինքներդ ձեզ՝ ոչ էմոցիոնալ, ոչ թե կրծքին հարվածելու, ամեն ինչ մեղադրելու կամ մեղքի զգացում տալու համար, այլ վստահ եղեք, որ ձեր հաջորդ արշավը կսկսեք առավել հիմնարար քայլերով և հեռատեսությամբ օժտված:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Սովորական սխալն այն է, երբ պատերազմ սկսելիս սխալ վերջից են մոտենում գործին, սկզբում գործում են, հետո միայն պարտությունից հետո քննարկում դրա պատճառները:

Թուկիդիդես (մ. թ. ա 460-455թթ.)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Երկարաժամկետ ռազմավարությունը հղի է երկու վտանգով: Դրանք, անշուշտ, պետք է հաշվի առնել և պայքարել դրանց դեմ: Նախ, նրա բերած հաջողությունը կարող է ունենալ

այն ազդեցությունը, որին ընդհանրապես հանգեցնում են հեշտ հաղթանակները՝ արբեցում, գլխապտույտ հաղթանակից հետո, որի պատճառով հեշտ է կորցնել իրականության և համաչափության զգացումը, և ձեր ամբողջ ապագան, ըստ էության, կախված է այս զգացողությունից: Նույնիսկ այնպիսի մեծագույն, անզուգական ստրատեգները, ինչպիսիք են Հուլիոս Կեսարը և Նապոլեոնը, ի վերջո զոհ գնացին հենց այս սխալի պատճառով: Կորցնելով իրականության զգացումը նրանք հավատացին իրենց ինտուիցիայի անսխալականությանը: Որքան մեծ է հաղթանակը, այնքան մեծ է վտանգը: Պատրաստվելով հաջորդ արշավին, դուք պետք է կանգ առնեք, մտածեք ավելի լուրջ, քան նախկինում: Թույլ մի տվեք, որ հույզերը գերակշռեն և պահպանեք իրականության զգացումը:

Երկրորդ, երկարաժամկետ ռազմավարության համար անհրաժեշտ կենտրոնացումն ու խորթացածությունը կարող են այնքան ուժգնանալ, որ դժվար լինի գործողություններ ձեռնարկել: Աշխարհը մանրակրկիտ ուսումնասիրելուց, այն մինչև ամենափոքր մանրամասները հասկանալուց հետո դուք չափազանց շատ հնարավորություններ եք տեսնում: Ոմանց համար սա կարող է հանգեցնել անվճռականության, ինչպես Համլետի դեպքում: Անկախ նրանից, թե որքան առաջ եք գնացել, մեր բնույթի կենդանական կողմը դեռևս ապրում է մեր մեջ՝ էներգիա հաղորդելով մեզ, ոգեշնչելով պայքարելու: Առանց մարտի ծարավի, առանց այն կատաղի ուժի, որով այն մեզ ներշնչում է, անհնար է հաղթահարել վտանգը: Խորամանկ Ոդիսևսի տեսակները հավասարապես հարմարավետ են զգում իրենց բնույթի երկու կողմերի հետ էլ: Նրանք հիանալի են ապագան պլանավորելու մեջ, կարողանում են առաջ նայել և տեսնել շատ ավելի հեռու, բայց երբ ժամանակը գալիս է վճռական գործողությունների, նրանք քայլ են կատարում: Ձեր զգացմունքները վերահսկելը չի նշանակում դրանք լիովին ճնշել, այլ դա նշանակում է դրանք օգտագործել ձեր օգտին:

Սկիզբը.
1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf
4) https://www.datocms-assets.com/63284/1744480072-drive-into-desperate_arm.pdf
5) https://www.datocms-assets.com/63284/1747510579-avoid-traps_arm.pdf
6) https://www.datocms-assets.com/63284/1751140077-divide-forces_arm.pdf
7) https://www.datocms-assets.com/63284/1754762031-crusade-war_arm.pdf
8) https://www.datocms-assets.com/63284/1759605001-force-estimate_arm.pdf
9) https://www.datocms-assets.com/63284/1766256811-stance_arm.pdf
10) https://www.datocms-assets.com/63284/1771097564-chin-strat-territory_arm.pdf

Աղբյուրը. https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi